

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Մի 30



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՆԱԿԱՅԻՔ, ՆԱԿԱԾՈՒՄ ԵՎ ՆԱԿԱԾՈՒՄ

ՆԱԿԱԾՈՒՄ

ՈՍ

ՍԵՄԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱԾՈՒՄ



ՍԵՄԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՆԱԿԱԾՈՒՄ. ՆԱԿԱԾՈՒՄ



30

ՍԵՄԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՍԵՄԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՆԱԿԱԾՈՒՄ. ՆԱԿԱԾՈՒՄ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ ❧ هانراکيداق ❧ HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 30 || 26 ՅՈՒԼԻՍ 1903



ՍՏՈՒՆԵՐ ՄԸ

(ԲԱՆԹՈՒՄ)

Նրկնի կամարն է ոսկեգոծ ծիրանի,
Լոյս մը, շունչ մը՝ զեփիւռին պէս կը մարի,
Լուսինին դէմ զերդ կոյս շիկնիլ վարանի՝
Վարդը՝ իրեն հմայփոյր քնարի:

Լոյս մը, շունչ մը՝ զեփիւռին պէս կը մարի,
Հոգւոյ քեւերն կը սաւառնին կամարին.
Վարդերն՝ իրենց հմայփոյր քնարի,
Զեփիւռներու քեւերուն մէջ կը մարին:

Հոգւոյ քեւերն կը սաւառնին կամարին,
Կը մարմօին լոյսերն շունչէ մը նուաղ,
Զեփիւռներու քեւերուն մէջ կը մարին՝
Թալկուն կայծերն՝ մոխի՛ր հոգւոյս, շո՛ւս աւաղ:

Կը մարմօին լոյսերն շունչէ մը նուաղ,
Վերջալոյսի շողերուն մէջ լուռ, յէտին.
Թալկուն կայծերն մոխի՛ր հոգւոյս շո՛ւս աւաղ.
Ստուերէ մը, անշունչ՝ իսկո՛յն կ'աննետին:

1900

ԱՇՈՏ Յ. ՊՅԶՊԱԶԵԱՆ

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի

ԱՅԽԱՐՀԱԳՐՈԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

(Շարունակութիւն քիւ 24եւ)

Դասասուն. — Գալով երկրագունտիս մեծութեան, իր տրամագիծն է՝ 12756 քիլոմէթր եւ ունի 1,082,850,000,000 խորան. քիլոմէթր ամբողջութիւն մը:

Գ. աւակ. — (աչքերը բանալով) Այդչա՛փ խոշոր է եղեր՝ հէ՞ միւսիւ:

Բ. աւակ. — (Գ. աշակերտին): Այդ ի՞նչ «չտեսութիւն»... արեգակին մեծութեան ի՞նչ պիտի ըսես որ երկրէս 1,300,000 անգամ աւելի խոշոր է:

Գ. աւակ. (Բ. աշակերտին) փքացիր գիտութենէդ սնապարծ:

Բ. աւակ. (Գ. աշակերտին) Հէ՛է՛է՛. ատ ի՞նչ անարդելի օժական. կ'ապտակեմ գլքեզ պարոն, գիտե՞ս:

Գ. աւակ. — Զո՞վ կ'ապտակես:

Դասասուն. — (ընդմիջելով), է՛յ, պէ՛, է՛յ, ի՛նչ ապուր կը խառնէք կոր. ըմբշտամարտութեա՞ն պիտի ելլաք: Նստեցէք տեղերնիդ. երկուքնիդ ալ ապա թէ ոչ կ'արտաքսեմ դասարանէն. Ո՞րչափ անվայել բան է ըրածնիդ՝ գիտե՞ք:

Ե. աւակ. — Ժամավաճառ մի՛ ըլլաք միւսիւ, անոնց ըրածը կատակ է. դուք չարունակեցէք:

Դասասուն. — Սմբողջ աշխարհիս վրայ 1,611,496,000 ըն. կայ:

Ա. աւակ. — Կենդանիներէն զատ անշուշտ:

Զ. աւակ. — Էրիկ մարդ եւ կնիկ մարդ ըսել կ'ուզէ միւսիւն, չե՞ս հասկնարկոր:

Դասասուն. — Այո՛, այդ գումարը կը ներկայացընէ մեզի պէս արարածներուն թիւը:

Ը. աւակ. — Է՛յ կենդանիներուն թիւը ո՞րչափ է միւսիւ:

Թ. աւակ. — Ըստ իս, սիրելի ընկեր, պէս պէս թռչունները, կովերը, ձիերը, կապիկները, գոմեշները, կոկորդիլոսները, կատունները, մուկերը, փիղերը, առիւծները, շունները, վագրերը, էշերը եւայլն. վերջապէս ամէն կենդանիները մէջը հաշուելով, ես այնպէս կը կարծեմ թէ՛ անոնց թիւը 100 միլիոնը կ'անցնի:

Ը. աւակ. — Բայց, ազնիւ ընկեր, հաշուի չե՞ս առներ ձձիները, անոնք ալ արարածներ են վերջապէս:

Թ. աւակ. — Այն ատեն 200 միլիոն մը կ'ըլլայ:

Բ. աւակ. — Օ՛հ. եթէ պարագուարձ լուերը, ճարպապարարտ միուկները եւ քմծիճաղ քրսան պիտի լինէր մէջը հաշուէնք, ի՛նչ կ'ըսես... կենդանիներուն թիւը մէկ միլիառը կ'անցնի:

Գ. աւակ. — Վա՛յ ծաղրածու...:

Բ. աւակ. — Միւսիւ, ծաղրածու ըսաւ, մամախ պիտի ըսեմ՝ ապա թէ ոչ պատժեցէք զինքը:

Դասասուն. — Պէ՛ ճանըմ, պէ՛ ճանըմ, լուցէ՛ք նայիմ քիչ մը որ չարունակեմ:

Ա. աւակ. — Ուշագրութիւննիս ձեզի է միւսիւ, չարունակեցէք:

Դասասուն. — Աշխարհի տարածութեան վրայ չորս կողմ բնակող մարդիկները՝ միեւնոյն դիմագիծ ու մորթի գոյնը չունին և ոչ ալ միեւնոյն հասակը, այլ իրենց ապրած միջավայր ու կլիմային համեմատ տարբեր դրոշմներ կրելով այլազան ցեղեր կը կազմեն: Ընդամենը վեց ցեղ կայ, բայց ատոնց իւրաքանչիւրը իր բազմաթիւ ճիւղերն ունի: Լեզուներուն գալով 1000 տեսակ լեզու և բարբառներ կը խօսուին երկրագունտիս վրայ որոնցմէ կան որ գիր չունին, բաց աստի՝ 8 տեսակ կրօնք կայ որոնք են. Ա. Քրիստոնեանները 550 միլիոն ժողովուրդ, Բ. Պուտայադաւանները՝ 460 միլիոն, Գ. Պրահմանադաւանները՝ 230 միլիոն, Դ. Մահմետականները՝ 220 միլիոն, Ե. Կուսպաշտ և առանց պաշտամունքի եզոզները՝ 140 միլիոն, իսկ Հրեաները՝ 8 միլիոն: Անցնինք հիմայ պետութիւններուն: Եւրոպայի մէջ կայ 24 պետութիւն, Ասիոյ մէջ՝ 18 (Եւրոպական ստացուածքները մէջը հաշուելով), Ափրիկէի մէջ 15 պետութիւն, իսկ Աւստրալիոյ եւ Ովկէանիարի մէջ Եւրոպական ստացուածքները 5 պետութիւն կը կազմեն: Ասիէց զատ Ովկէանիարի մէջ բազմաթիւ մանր անկախ պետութիւններ կան որոնք նշանակութենէ զուրկ են: Աշխարհիս վրայ ընդ ամէնը 63 պետութիւն և ինքնիշխանութիւն կայ:

ՀԱՅԻ ՄԻԻԹԱՐ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ

(ՈՒՍՈՒՄ ՆԱԽԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն 29րդ թիւէն)

Գ.— Բնականաբար այս վերջին դասակարգն ամէնէն աւելի մօտ պիտի գտնէինք գիտութեան ու մտաւորական կեանքին: Թէեւ քիչուր, բայց կան վերջապէս ինքնաշխատութեամբ յառաջացող հմուտ ուսուցիչներ, որոնք ո՛չ բարձր, վարժարանի մը շրջանաւարտներն են ո՛չ ալ զարգացեալ միջավայրերու մէջ ապրած, սակայն իրաւացի պարծանքով կրնան ցոյց տալ թէ՛ շատ անդամ իրենց ձեռքին տակ կ'ունենան նմանօրինակ հաստատութիւններէ դուրս եկող պաշտօնեաներ:

Գաւառներու մէջ, գիտական մեթոտներու հմուտ մը մտքի բաւարար պաշարով մը օժտուած կարող ուսուցիչներ սկսած են երեւիլ, մանաւանդ վերջի տասնեակ տարիներուս մէջ, երբ խալֆայական խամրոցներուն անբաւականութիւնն ու վնասը զգացուեցաւ այս կողմերն ալ: Անոնք թէ՛ գործով և թէ՛ ապրուածքով հետեւելի օրինակներ կ'ընծայեն, որոնցմէ ժողովուրդին բոլոր դասակարգերն ալ կրնան օգտուիլ: Իբրեւ կրթ. մըշակ՝ իրենց գործին մարդն են և միշտ ուշադիր բոլոր այն նորութիւններուն, որոնք կրթութեան շուրջը կը գառնան, և իբրեւ մարդ՝ յարաճուն հետաքրքրութեամբ հետեւիլ կը սիրեն օրուան գիւտերուն: Այսպէս, թէ իրենց գործին մէջ արդիւնաւոր

կ'ըլլան ու կը զարգացնեն զայն և թէ՛ կենսական տուժումներէ զերծ կը մնան, կարելի եղածին չափ:

Սակայն այս կարգի դէմքեր ո՛րքան կը փնտռուին ամէն միջավայրի համար, նոյնքան ալ հազուադէպ են դժբաղդաբար, հետեւապէս երբ համայնքի մը ուրոյն դասակարգերու իւրաքանչիւրին ամբողջութեան վրայ է մեր խօսքը, վերի ըսածնիս չենք կրնար ընդհանրացնել: Ատիկա անուշիկ միամտութիւն մը պիտի ըլլար: Ուստի գոցենք փակագիծը, մեծամասնութեան անցնելու համար:

Այն ալազան երեմիականները, որոնցմէ մեր ուսուցիչներու մտաւորական մակարդակն այնքան սնանկ ցուցնել կ'ուզուի, թերեւս չափազանցութեան տարուած ըլլան: Թերեւս կարգ մը դիմակաւոր դասալիքներու շահատակութեանց երեսէն հանրային կարծիքը պղտորած ըլլայ մեր կարգացողներուն նկատմամբ, զորս ատենին այնքան կը յարգէր: Ու կարելի է երկարել ենթադրութեանց այս շարքն, առանց գոհացուցիչ ելքի մը յանգելու, որովհետեւ ի՛նչ բաներով որ քննադատուած կ'ուր քաջըլած են մեր ուսուցիչները՝ թուցիկ թղթակցութիւններու հակասական կրկնութիւններուն մէջ, չա՛տ չփոթ ու տարտամ խորհուրդներ կը ներշնչեն: Ո՛չ ոք, կարծեմ, փոխանակ այդքան մը մեղադրանք տեղացնելու անոնց գլխին, փորձած ըլլայ շարժառիթ իրողութիւնները մատնանշել անկեղծօրէն:

Թերի և սոսկ տեսական ուսում մըն է մեր չա՛տ մը ուսուցիչներուն ուսածը և ուսուցածը: Այս երկու բառերն են կրթական աղէտներուն աղբիւրն: Բոլոր բացազանջութիւններն ու պատրուակաւոր պոռչտութիւնները՝ այս շարժառիթներուն կը յանգին իսկապէս: Թերի ուսումը տգիտութենէն անհունապէս աւելի վնասակար է: Տգիտութիւնն անգիտակցութեան կ'առաջնորդէ մարդս, թմրեցնելով միտքին գործիչ ազդակները, մինչ թերի գիտութիւնը՝ սխալ գիտակցութեան մը բաւիղներուն մէջ կը մոլորեցնէ զայն, ամէնէն արտառոց դերը տալով անոր, թէ Փիզիքական, նիւթական և թէ մտաւորական տեսակէտներով: Դըպրոցավարական կարգ մը անճոռնի նորութիւնները, որոնք այս կամ այն թերուսի քմահաճոյքը միայն ունին իբրեւ հիմ, դէպի միւս դասակարգերը ցոյց տրուած տեսակ մը անտեղի արհամարանք՝ դարձեալ այդ միեւնոյն ուսեալներուն (°) կողմէն, սկեպտիկ բարքերու և զաղափարներու ցուցամուլիկ խեղկատակութիւնները ևայլն, բոլորն ալ թերուս միտքերու վիժումն են և ո՛չ ուրիշ բան: Գիտական լուրջ զարգացումն ամէնէն հուժկու հակազդակն է բոլոր այս թեթեւութիւններուն դէմ, հակառակ ա-

նոնց որոնք անհաւատութիւնն ու տարաշխարհիկ բարքերու կապ-
կումը՝ գերազանց հմտութեան մը յատկանիշերը կը համարեն:

Տիեզերական հրաշալի երեւոյթներու բացատրութեան ու լու-
սաբանութեան գեղեցիկ գործին մէջ, իրենց լայն տեղը գրաւող
ամենէն մեծ գիտուններն իսկ ամենէն թուեղ բարեպաշտներն
եղած են, իրենց ներքին կեանքով, օրինակ՝ Նիութընը, Կոպէր-
նիկոսը և այլն: Եւ արդէն ասիկա հաստատուած ճշմարտութիւն
մըն է: Թէեւ անոնցմէ շատերուն գիտակցական ու զօրեղ հաւատ-
քը՝ գերծ մոլեռանդներու մեքենական գիմածռումներէն՝ յաճախ
չէ հասկցուած, ժողովուրդին կողմէ, իր իսկութեամբ, կամ սխալ
հասկցուած է: Մեր թերուաները, շատ վտանգաւոր ճամբու մը
հետեւած են սկիզբէն ի վեր, այս սխալ հասկացողութիւններուն
վրայ ձեւելով հետեւակ դերասանի սնամէջ ծէքծէքումներն:

Կրնայի՞ք խորհիլ թէ՛ տեսական ու վերացիկ երեւոյթէ մը
տարբեր ըլլալ այս վերջիններուն քերի զարգացումը: Երկբայիւն
անգամ աւելորդ է: Լուրջ ու գործնական հմտութիւնը՝ մտքի այդ
խեղճուկ սահմաններուն վրայ գործ չունի:

Իրենց պատճոհն ու ներքին կեանքը ի՞նչ կերպով կ'ազդուի ի-
մացական այդ վիճակէն:

Այս է արդէն մեր քննածը և քննելիքը՝ ժողովուրդի բոլոր դա-
սակարգերուն համար ալ:

Մեր ուսեալներն ալ, ի հարկէ մէկդի առնելով այն քանի մը
ցանցառ դէմքերը, որոնց վրայ խօսեցանք, ո՛չ նուազ կը տուժեն
թէ՛ գործի և թէ կեանքի մէջ:

Գործի մէջ կը տուժեն, ինքնաշխատ զարգացումէ զուրկ, տի-
րացուական լճացում մը ցուցադրելով մշտնջենապէս: Մտաւորական
միջակութիւններն, սխալ ըմբռնումներու աւելցուքներովն անտա-
նելի դարձած, շատ գէշ կ'ազդէ իրենց հետ ապրող և իրենց հե-
տեւող մանուկներու նկարագրին: Ու հետեւաբար չեն ալ վար-
ձատրուիր, փափաքուածին չափ, որովհետեւ ռամիկը եթէ չկըր-
նայ նոյնիսկ դաստիարակութեան և ուսման նրբութիւններուն
թափանցել՝ երեւան հանելու համար կատարուած արտառոց դե-
րերը, գեթ կը զգայ թէ շօշափելի արդիւնք մը չի տեսնուիր
դպրոցներէն:—Ապացոյց՝ գաւառաբնակ կամ գաւառացի ուսուցիչ-
ներու ներկայ արգահատելի նիւթական վիճակը:

Կը տուժէն նաև կեանքի մէջ: Ինչո՞ւ զարմանալ թէ՛ տղայք
բան մը չեն չահիր դասերէն, քանի որ նո՛յն իսկ իրենք, ուս-
եալները, չեն օգտուած իրենց քերձ և ցնցեսական հմտութիւնէն:
Արտաքին ձեւականութիւններուն չնայելով, ներքնապէս նոյն
հակաբնական երեւոյթներուն զուգընթաց, գաւառի համայնքին

միւս դասակարգերէն չեն տարբերիր ո՛չ մէկ կերպով, բացի սա
յաւելուածական անպատեհութենէն ալ՝ որով գեթ անոնցմէ շա-
տերուն վայելած հոգեկան մխիթարութեան փառասէնէն զուրկ են
իրենք: Ի՞նչ պիտի արժէր կարծեցեալ հմտութիւն մը մէկուն
համար որ հանգիստն և առողջութիւնը չի վարանիր զոհել թըղ-
թախաղին, նարտին և այլն: Բնալուծական տեսութիւններ գոց
ընել, բառեր, բանաձեւեր միայն թխմել միտքը, յետոյ դպրոցը
կամ հրապարակի վրայ զանոնք գլտորելու համար, ի՞նչ օգուտ
անոր, որ ալքօլին բաղադրութեան աւերիչ տարրերը չէ ծանօ-
թացուցած ինքզինքին, վրայ տալով հանդերձ դիրք, պատիւ և
ամէն ինչ: Եւ արդէն, պարզ խօսակցութիւն մը նմանօրինակ
նիւթերու վրայ, գիտական պտոյտ մը անոնցմէ մէկին հետ,
դիւրաւ երեւան կը հանէ մտաւոր աղքատութիւննին: Ու կը
տեսնես որ՝ դպրոցին չորս պատերէն ու դասագրքին կողքերէն
դուրս գիտութիւն չի ճանչնար... Պէտք կա՞յ աւելին մանրա-
մասնելու:

Ասոնցմէ մէկտեղ, տարբեր դասակարգերը ծաղրելու, հեգնե-
լու իմաստակի պչրանքէն վար չեն մնար ոչ մէկ ատեն: Չեմ գի-
տեր ինչ առաւելութիւն կ'երեւակայեն ինքզինքնուն վրայ սակայն
գործի և առտնին միջավայրերուն մէջ:

Շարունակելի

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ,

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԵՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՉ

Մալպրանժ: — Այս միտքի մտածողը ծնած է Բարիզի մէջ
1638ին և մեռած 1715ին: Հարկաւ տեսլապաշտ (idéaliste) վար-
պետէ մը շատ բան պէտք չէ յուսանք կրթական խնդրոյն հա-
մար: Իր բնազանցական կաղակուրտանքներուն մէջ կայծակի նը-
ման խորհուրդներ և սկզբունքներ ցանցնած է որոնց վրայ հա-
կիրճ ակնարկ մը ձգել բաւ է: Վերացական մտածումներով մտա-
ջոկուած, հեռի՝ բոլորովին գործնական խնդիրներէ եւ զբաղում-
ներէ, կը պահանջէր որ մանուկներն ալ դաստիարակուին բնա-
զանցական գաղափարներով և ճշմարտութիւններով: Մալպրանժի
նայելով, մատղաշ միտքը եթէ պահպանենք վախի կամ փախա-
քի, վհատումի կամ յոյսի, ցաւի կամ խինդի խոր տպաւորու-

թիւններէն, չափ դիւրաւ կրնանք մարտել տալ բոլոր բարձր ճշմարտութիւնները և ուսումները: Ներկային մէջ չենք յաջողիւր քանզի մանուկը այս տպաւորութիւններուն տակ կը նմանի փառատենջիկ, սնանկացած անձի մը որուն հոգեկան եւ իմացական յոգնութիւններն ու տագնապները թոյլ չեն տար ալճեպրայի խնդիր մը լուծելու և կամ լուրջ խորհրդածութիւն մը ընելու: Սակայն Մալպարանտ չըսէր մեզ թէ ինչպէս կարելի է իր պահանջած կղզիացումին մէջ պահել մանուկը, եւ ուստի քարոզած սկզբունքը ջուրը կ'իյնայ: Արդէն կարելի⁶ է օրօրոցի հոգին՝ խնձորին ու շաքարին, ճրագին ու կրակին տպաւորութիւններէն պահպանել. բուն իսկ ինք կը հակասէ երբ կ'ընդունի միանգամայն թէ հոգին և միտքը զարգացնող ազդակները՝ շրջավայրին մէջ կը գտնուին. և ուստի ուշադրութիւն տալու է միջավայրին՝ թէ որ նպատակաւոր յառաջացում մը կ'սպասուի մանուկին ապագայէն: Դարձեալ հակառակ կուգայ վերի գաղափարին՝ իր սա կէտն ալ թէ տղուն կրթութեան ազդու միջոցը նիւթական բիրտ պատիժն է: Պատիժը՝ ցաւ է եւ ցաւը խանգարում եւ խոր տպաւորութիւն յառաջ կը բերէ մտքին վրայ որով պիտի չկրնայ ըմբռնել բարձր գաղափարներ:

Իր հոգեբանական իմաստասիրութիւնն ալ կը հակառակի երբ կ'ըսէ թէ հոգին անկախ չէ. նա կապուած է շրջավայրի ամէն մէկ առարկային հետ եւ անոնց հետ յարաբերութեան մէջ է: Այսու ամենայնիւ իր բազմահմուտ և բազմահատոր գրուածքներովը ազդեցութիւն մը թողուց կրթական խնդրոյն վրայ:

* * *

Լոֆ. — Սա խորհողը ծնաւ Անգղիոյ Սօմրսէթ գաւառին Ռինկթըն քաղքին մէջ 1632ին և 72 տարի տնաւ, մեծցաւ, ուսաւ, գրեց, սորվեցուց, հրատարակեց, այսպանուեցաւ, գնահատուեցաւ ու իմաստասիրութեան և դաստիարակութեան էջերուն վրայ անջինջ անուն մը թողուց ու անցաւ կեանքի թատերաբեմէն:

Լոքի՝ դաստիարակութեան վրայ ունեցած ազդեցութիւնը ըմբռնելու համար նախ իր փիլիսոփայութեան վրայ աչք մը ձգեցինք: Լոք՝ այս դարու զգայապաշտ (sensationaliste) դպրոցին գլուխը կը կանգնի եւ երկու սկզբունքներով կը ճառէ իր իմաստասիրութիւնը: Նախ՝ բացասական տեսակէտով թէ ներքին գաղափար չկայ մարդուն մէջ հակառակ Տեքարդի: Հոգին ճերմակ էջ մըն է և կամ զգայուն ապակի մը որ մարդ արարածին մէջ կախուած է: Երկրորդ, շրջական մասը իր խորհուրդներուն, թէ փորձառութեամբ այս հոգին կը տպաւորուի. կը գծուի և կը գրուի. ու ահա այս արձանագրութիւնն է զոր գիտութիւն կ'ան-

ուանենք: Այս երկրորդ փորձառական մասը դարձեալ երկու ճիւղի կը բաժնէ, զգացողական եւ մտածողական, այսինքն թէ մեր փորձառական գիտութիւններէն ոմանք զգայարաններու միջոցաւ կը հաւաքենք և ոմանք ալ ներքին խորհողական կարողութիւններով: Այս ուղղութենէն կը տեսնենք թէ շեշտը փորձառութեան վրայ: ալ կը դնէ, և ուստի թէ որ անուանենք զինքը փորձառու-զգայապաշտ վարպետ, կարծեմ ճշդիւ որակած կ'ըլլանք:

Վերջի տարիներուն մէջ իր բարեկամներէն Լորտ Շաֆէզպուրիի զաւակներուն դաստիարակութեան հոգը ստանձնելով բազմահմուտ և ծանրախոհ գլուխը պահ մըն ալ գործածեց կրթութեան համար: Իրաւամբ կրնամք ըսել թէ իր Կրթական մշտնջենական նուն երկը որ սոյն պաշտօնէն վերջ գրեց, չափահաս ծառի մը էն հասուն պտուղն է: Լոք՝ բժշկական ուսանող մը եւս ըլլալով, տղոց մարմնական աճումին համար բաւական նոր ու տարօրինակ բաներ մըն ալ կ'ըսէ: Մարկոս Աւրելիոսի նշանաբանը «Առողջ միտք՝ առողջ մարմնոյ մէջ», բացարձակապէս որդեգրած է: Մաքուր օդ, շատ ու աշխոյժ մարմնամարզ, երկար քուն, քիչ բայց կանոնաւոր ուտեստ, լայնկեկ եւ զովապահ հանդերձ ու պաղ ջուրի լոգանք՝ իր կարեւոր պահանջներն են ֆիզիքական զարգացումի համար: Գլուխդ և ոտքդ միշտ բաց ու պաղ եւ կօշիկներդ այնքան դիւրահանելի ըլլալու են որ ջուր մը տեսածիդ պէս հանես ու մտնես մէջը, կ'ըսէր:

Երնե՛կ կուտար գեղջուկ լաճերու որոնք մերկ, բոկոտն, բացն ու թացը արհամարհելով կ'ուռճանան: Ռուսոյէն առաջ ինք ըսաւ թէ «մարմինը կազմելու հոգը բնութեան ձգէ՛. նա ինչ որ ուզէ ընել, ա՛ն է չիտակը»: «Մարմինը ամէն բանի կը յարմարի» ի սկզբունքով, վայրենական վարժութիւններ ու թելադրութիւններ կը յատկանշեն իր գաղափարները: Այս չափազանցութիւնը կը յիշեցնէ ինձ Մեծն Պետրոսի պահանջը թէ բոլոր նաւազները ունակելու են ծովային ջուր խմելու, որոյ ի հետեւութիւն բաւական զօրքեր կորսնցուց:

Լոք իբր ուսուցիչ շատ շահեկան սկզբունքներ ունի, որոնցմէ ոմանք պիտի պարզեմ: Սորովեցնողի մը պաշտօնն է, անհատականութիւն եւ իրականութիւն, երկու տարբեր գոյութիւններ իրարու կապել. ուստի նախ իւրաքանչիւրը առանձինն սերտելու, ճանչնալու և ապա նպատակին ձեռնարկելու է: Ուրիշ բացատրութեամբ տղուն հոգեբանութիւնը և ուսանելի առարկային ամփոփ էութիւնը՝ ուսուցիչ մտքին ծանօթ ըլլալու են:

Ուրիշ մեծ վարպետներու նման, իրողութիւնները՝ մանուկին

կամ ուսանողին ըմբռնել աալու համար, կարելի եղած զուարթութեամբ զուարթ կը պահէր: Յիշողութեան ուժին վրայ իր համարումը կորսնցուցած, զայն յառաջգիւնութեան գործիչ չէր համարէր: Իրենց պաշտօնին նպատակը և եղանակը չճանչցող ուսուցիչներ միայն՝ փոխանակ մտքին խորհողութիւնն ու դատողութիւնը զարգացնելու, կը ծանրանան յիշողութեան վրայ: Լոքի ընդարձակ մտքին մէջ իր փոքրկութեան գիտակցութիւնը և գիտութեան անհունութիւնը արթննալով եւ կեանքի կարճութիւնն ու օգտակարութեան խնդիրը առջեւը գալով, կը թելադրէ ուսումնեւրու մէջ զանազանութիւն մը դնելու, իբր օգտապաշտ վարպետ, անհրաժեշտը երկրորդականէն, չահաբերը գեղագիտականէն միշտ կը նախադասէ: Սորվեցողը որպէսզի վաղը գործնական մարդ մը և կեանքի պայքարին մէջ զինուած գինուոր մը ըլլայ կ'ըսէ: Արդէն իր մեծ արժանիքը՝ ձեւականութեան դէմ ունեցած կռիւին մէջ կը գտնենք «Սօսակցէ մէկ տեսակ մարդոց հետ, կարգա՝ մէկ տեսակ գրքեր, եւ ահա խելապատակդ պիտի լուսաւորուի յունիսի կէսօրուան պէս»: Լոք՝ այս խրատով ըսել կ'ուզէ թէ պարբերական կամ չըջանական աշխատանքդ մէկ առարկայի մը վրայ թող ըլլայ: Անշուշտ սոյն եղանակը չենք կրնար մերձեցնել պատանի մտքերու, որոնց համար ուսումնեւրու պէսպիսութիւնը՝ զուարճութիւն և հանգստութիւն կուտան:

Գալով իր վարելու եղանակին, Մօնթէյնի «խիստ մեղմութիւնը» իրեն մեթոտ ըրած է: Աշակերտը ուղղելու համար լռիկ ու մնիկ, համբերող ու անխռով վարմունքը, զայն ինքնագիտակցութեան շուտ կը բերէ, և մինչեւ որ յանցաւոր մը այս կէտին չհասնի, ապստղիւն կը մնան ուղղութեան համար նպատակուած ամէն միջոցներ:

Գաւազանը՝ ստորնայնող ու միանգամայն հակազդող վարչութիւն մըն է: Անոր տակ բարձրացում չի գոյանար բաց ի բացառիկ պարագաներէ որոնց մէջ հոգիին խեղութիւնը և նկարագրին անուղղայնութիւնը՝ տղուն ամբողջ խառնուածքին՝ ըմբոստացող հանգամանք մը տուած են: Բարձրացնող մեծ զօրութիւնը ծածկուած կը տեսնէ պատուոյ զգացումին տակ, զգացում մը որմէ կը ծնի պարտքի գիտակցութիւնը, և որուն միջնորդութիւն մէջ այդ գիտակցութիւնը կը հրահարի և կը մղէ անձը ընելու ինչ որ իրեն և ընկերին համար բարի և օգտակար է:

Վերջակէտը Լոքի կրթական մտածումներուն, սա է: Դաստիարակութեան նպատակը՝ յիշողութիւնն ու իմացականութիւնը զարգացնելէ աւելի, բարոյական բարձր ունակութիւններ ու ազնիւ զգացումներ մշակել և առաքինի նկարագիր մը կազմել է:

Անհատներու խորհուրդը առաջնորդելու է ներդաշնակութեան մը՝ տիեզերքի մեծ խորհուրդին հետ : Ուսանողը դնելու և յղելու է այն ճամբուն մէջ որ շարունակ վե՛ր, վե՛ր կը տանի եւ Աստուծոյ քով կը հասցնէ :

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

Ա. Մ. Ա. Ռ.

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

Թէպէտ եկաւ ամառը՝ հընձոց եղանակ,
Մըշակն կ'երգէ արտին մէջ սըրտով զոհունակ,
Խումբ խումբ հօտեր լեցուած են լեռներ ու ձորեր,
Բայց սիրտըս ուրախութիւն երբէք չի ծորեր:

Թէպէտ անուշ է հիմա՝ պտղի ժամանակ,
Կը վայելենք միշտ առատ սալոր, շագանակ,
Քաղցրահամ տանձ ու խընձոր եւ ծիրան համեղ,
Բայց չեմ ունեցած երբէք հաճոյքներ անմեղ:


Թէպէտ ժըրաջան մեղուն մեղր շինէ փուկով,
Թռչունն իր ծագերուն վըրայ հըսկէ անվըրդով:
Ձուկերը մերթ կը ճաղուին ջուրերու մէջ զով,
Բայց ես այս ուրախութեանց կը կարգամ նըզով:

Թէպէտ քաղբըցիք ուրախ՝ իրենց տուն թողուն,
Եւ դիմեն զով գիւղեր վայելքներ զեղուն,
Խընդան, ցատկեն ու պարեն, երգեն օրն ի բուն,
Բայց ես կ'անցընեմ կեանքըս տըխուր ու տըրտում:

Թէպէտ զըպրոցականաց եղաւ արծակուրդ
Որ իրենց հաճոյքներուն շուտով տան յագուրդ
Ուսուցիչներ արձակման անուշ առիթով:
Կեանքի վայելք ըմբռնեն փոյթով, եռանդով.
Սակայն ասոնք չեն արժեր նոյն իսկ մէկ ըստակ,
Ես կը նախընտրեմ կարդալ, գըրել ու վաստակ:

Տիարպէքիր


ՄԻՀՐԱՆ ՊԱՍԹԱՃԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԾՈՎՈՒ ՄԱՍՈՒԿՆԵՐԸ

Մայաներու (ծովու մամուկ) մարմինը ծածկող պատեանը ե-
ռանկիւնի գմբեթարթի ձեւ ունի, եւ առջեւի կողմէն կը ձեւացնէ



կտցանման բերան մը՝ որ խիստ լայն ձեղքուած է:

Գանկին վրայ չորս երկար բողկուկներ ցցուած են, որոնց եր-
կուքը ակնապիճներու մէջէն ծնունդ առած են: Աչքերնին՝ ան-

համոր երեսիկներէ կազմուած, կարճ ու հաստ ջիղերու ծայր հաստատուած են: Պատեաննին ծածկուած է փուշերով ու կոշտերով: Գարձակողական զէնք գրեթէ բնաւ չունին՝ ինչպէս տեսանք, կռնակնինպէտք եղածէն աւելի ամուր է: Սովորաբար 10—15 սանթիմէթր լայնք ունին:

Նախնիք կը հաւատային թէ այս կենդանիները իմացականութեամբ օժտուած են: Եփեսոսի Անահիտի վիզէն կախուած կը ներկայացնէին զայն իբր նշան իմաստութեան: Նոյն իսկ կ'ընդունէին թէ երաժշտութենէ ալ կը հասկնան անոնք ու... պարելէ ալ համ կ'առնեն... իրենց կեանքին ամէնէն քաղցր պահերնուն: Երբ աւրու մը հանգիպի էգի մը, և կը փափաքի հաճելի երեւալ անոր, ետեւի երկու գոյգ թաթերուն վրայ կը կայնի եւ օրօրուելով, տատանելով իրեն ճաշակին խաղեր կը կատարէ:

Զարմանալի սովորութիւն մը ունին ծովու մամուկները՝ լօռերով, սպունգներով, բուստերով ծածկելու իրենց պատեանը, եւ ասիկա կամաւոր կերպով կ'ընէ: Իր աքածաններովը ծովային բոյսեր, եւայլն կը կարէ եւ բերնին տանելով կտրած տեղը թրջելէ յետոյ կռնակը՝ պատեանին վրայ կը փակցնէ: Բոյսերը հոն կ'աճին ու կը մեծնան, չարժուանտառ մը ձեւացնելով: Բնագէտ մը այս կենդանիներէն մին աւազանի մը մէջ փակելով՝ վրայի բոլոր բոյսերը կտրեց, յետոյ ջուրին մէջ վարդի տերեւներ նետեց. Մայան անմիջապէս զանոնք ժողվեց ու կռնակը փակցուց:

Ճարոնի ջրերուն մէջ կը գտնուի տեսակ մը՝ որ $3\frac{1}{2}$ մէթր մեծութիւն ունի եւ հանգիստ կերպով կարող է մարդ մը գրկել իր երկար բազուկներուն մէջ:

ԾՈՎԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԲՈՅՍԵՐԸ

Թէ ի՞նչպէս կոհակաց ու փոթորկաց խաղալիկ սովատանջ իւրազներուն կերակուր կ'հայթայթէ ովկիանոսը:

Յաճախ հողմերէն ալեկոծեալ նաւ մը, Հնդկական ովկիանոսին մէջտեղ կղզիացած ու սովէ բանտուած, կորսուելու վտանգին կ'ենթարկուի: Յանկարծ նաւավարը կ'նշմարէ փիւկոսի անտառներ, որք ծովուն խորէն կ'բարձրանան. անոր կլոր ու լայն տերեւներ մաղմաղ եղած են ծակոտիքներով, որոց մէջէն կ'անցնի աղի կոհակը, բայց անոնց ցօղունները ու արմատները կ'ըլլան որքան թանկագին նոյնքան քաջառողջ ու սննդարար կերակուր մը: Այս տեսնելով նաւաստիներն կղզան թէ իրենց սպառած ոյժերը պիտի վերածնին, կ'հաւաքեն այս բարերար բոյսերը, զորս նախախնամութիւնը անոնց կ'ներկայացնէ:

Անոնց քաջութիւնը վերստին կ'ոգեւորի, յոյսը կ'վերածնի անոնց ամէնուն սրտին մէջ, եւ, տկար բոյսի մը շնորհիւ, արդէն ուրախ գուարթ կ'դիմեն իրենց յոյժ-սիրեցեալ ծննդավայրը:

Ովկիանոսը միայն անտառներով պճնուած չէ. ունի նաեւ իր պարտէզներն ու ծաղիկները: Սատափի խեցիներուն եւ բուստի ծառերուն մէջտեղ կ'բարձրանան համեստօրէն ծովային մանիչակի դեղին տերեւները եւ ջուրերու վարդենին որ կ'ստակուի ծաղիկներով՝ որպէս ցամաքի վարդենին: Բայց կոհակաց իշխանութիւնը գեղազարդող փայլուն բոյսերուն մէջ ոչինչ այնքան վայելչագեղ է որքան այս հսկայ Փիւկոսները որոց ցօղունները կարծես կ'շափեն իրենց հովանաւորած անդունդին վրէժերը: Երբեմն փոթորիկը կ'խորտակէ, կ'խլէ եւ կ'վարէ այս անտառներն ամբողջ, իրենց բնակիչներովը մէկտեղ, մեծահոսանք ջուրերուն մէջտեղ: Յայնժամ, նման ցանցերու կամ ուռականներու, իրենց հետ կ'քշեն կը տառնին բոլոր ինչ որ կ'գտնուի իրենց անցքին վրայ. Այս կանաչագեղ կղզիներուն մէջ պարփակուած ձկները, խեցիները, միջատներն ու ժժմակները կ'քշուին, կ'տարուին օտար ծովերուն մէջ, ուր կ'հիմնեն նոր գաղթականութիւններ: Այս լայնածաւալ լարիւրինթոսներու վաղնջենի բնակիչներ կ'շրջագայեն միեւնոյն սաղարթներուն ներքեւ, կ'հանգչին միեւնոյն առանձնութեանց մէջ, ուր լոյս տեսան, եւ կ'ճամբորդեն, սապէս ըսելու համար, առանց թողելու իրեն ծնած տեղերին:

ՊՁՏԻԿ ՔԼՕ, ՄԵՄ ՔԼՕ

(Շարունակութիւն 29րդ քիւէն եւ վերջ)

— Այո՛, վա՛յ ինձի պատասխանեց պանդոկապանը, պրկելով իր ձեռքերը, իմ բարկութեանս երեսէն նորէն տուժեցի: Իմ սիրելի պղտիկ Քլօս, ասոր տեղ քեզի գրուան մը ստակ պիտի տամ ու ե՛ս պիտի թաղեմ ստնտուդ՝ ինչպէս իմ մայրս ըլլար, եթէ կ'ուզես զիս չմատնել: Թէ ոչ մահուան դատապարտուիմ պիտի:

Քլօ հաւանեցաւ, երրորդ գրուան մը դրամ՝ ստացաւ. ու թաղման ծախքը պանդոկապետին վրայ թողուց:

Երբ իր տունը եկաւ, տղայ մը զրկեց մեծ Քլօի տունը իրմէ պարսպ գրուան մը փոխ առնելու համար:

— Հէ՛, գոչեց ցատկելով, զինքը ես չմեռցուցի՞ մի: Պէտք է որ երթամ աչքովս տեսնեմ:

Ու իսկոյն պարապ գրուանը ձեռքը Քյօի քով եկաւ։ Աչքերը խոշոր խոշոր բացաւ անոր դրամները տեսնելով։

— Ինտո՞ր վաստկեցար աս գանձը, հարցուց։

— Իմ տեղս ստնտուա մեռցուցեր էիր դուն, անոր մարմինը ծախեցի, որուն փոխարէն ընդունեցայ գրուան մը դրամ։

— Աղէ՛կ ծախեր ես, ըսաւ մեծ Քյօ։

Յետոյ փութաց իր տունը երթալ, կացին մը առաւ ու մեռցուց իր պառաւ ստնտոն։ Կառքի մը մէջ դրաւ դայն, քաղաք մեկնեցաւ ու դեղագործին հարցուց թէ կ'ուզէ՞ր դիակ մը գնել։

— Նայինք, պատասխանեց 'դեղագործը. բայց նախ ըսէ՛ ինծի թէ ո՞ւրկէ բերեր ես։



— Իմ ստնտուա է, զոր սպաննեցի գրուան մը դրամի ծախելու համար։

— Տէ՛ր Աստուած, խե՞նդ ես, ի՞նչ ես, որ ինծի ատանկ բաներ կը գրուցես ու մեռնելու վտանգին կ'ենթարկես ինքզինքդ։

Բայց ճշմարտութիւնը հասկնալով, չար մարդուն հասկցուց ամբողջ արհաւիրքը իր արարքին ու ցաւը զոր առթած էր։ Ասոր վրայ, Մեծ Քյօ իր կառքը ցատկեց ահարեկած, մտրակեց ձիերն ու քառասմբակ արշաւեց։

— Վրէժս պիտի առնեմ, խե՛րը անիծածս վրէժս պիտի լուծեմ պզտիկ Քյօէ։

Ու երբոր տուն մտաւ, մեծ տոպրակ մը առաւ, պզտիկ Քյօին

տունը գնաց ու ըստ անոր. « Երկրորդ անգամ ըլլալով քու խաբէութեանդ զոհը եղայ: Իմ չորս ձիերս սպաննելէ վերջը, ստնտուս ալ սպաննեցի, դո՛ւն ես պատճառը աս ամբողջ շարիքներուն, բայց ալ պիտի գիս չկրնաս խաբել »: Յետոյ, պզտիկ Քլօն բռնեց մէջքէն, տոպրակին մէջը խոթեց, ու կռնակը առաւ ըսելով. « Քեզ պիտի խեղդեմ »:

Ճամբան՝ մինչեւ գետ՝ երկայն էր, ու պզտիկ Քլօ՝ ծանրակիր. ասոր համար էր որ սպաննիչը կրպակ մը մտաւ զովանալու համար, տոպրակը տունին ետեւը ձգելով, ուրկէ ոչ ոք կ'անցնէր.

— Աւա՛ղ, ափսո՛ս, հառաչեց պզտիկ Քլօ տոպրակին մէջէն, ինքնիր վրայ դառնալով ու դառնալով, բայց չկրցաւ չուննը քակել:

Դիպուածաւ, կով մը մարգագետինէն փախած այդ կողմը պրծաւ, ու ծերուկ հօտաղ մը զինքը հետապնդեց հօտին միացնելու համար: Տեսնելով պարկը որ կը շարժակի, կեցաւ:

— Ո՞վ կայ հոն, պոռաց:

— Խեղճ մարդ մը որ շուտով դրախտ պիտի երթայ:

— Շատ շուտ յափրացեր ես դուն: Ես, հէ՛ք ծերուկս, շատ գոհ պիտի մնայի կարելի եղածին չափ շուտ հոն երթալու:

— Շատ աղէկ, իմ բարի մարդուկս, բա՛ց տոպրակը ու մէջը մտիւր իմ տեղս. քիչ ատենէն կը հասնիս հոն:

— Սրտա՛նց կը բաղձամ, ըսաւ ծերուկ հովիւը՝ տոպրակը բանալով որպէսզի պզտիկ Քլօ դուրս ելլէ: Բայց կը խոստանա՞ս ինծի հօտս նայիլ:

— Անտարակոյս:

— Ու ծերուկը մտաւ տոպրակին մէջ, որուն վրայէն պզտիկ Քլօ գոցեց: Վերջը արջառներուն միացաւ, ու ելաւ գնաց զանոնք իր առջեւէն քշելով:

Քանի մը վայրկեան ետքը մեծ Քլօ դուրս ելաւ կրպակէն ու տոպրակը կռնակը առաւ: Շատ թեթեւ եկաւ, վասն զի ծերուկ նիհար հովիւը Քլօին չափ ծանր չէր. « Գինին ինծի ուժովցուց, ըսաւ, աւելի աղէկ »: Ու երբ գետեզերք հասաւ, հովիւը գետը նետեց՝ գոչելով. « Ա՛լ իս չպիտի կրնաս խաբել »: Ու ճամբայ ելաւ դէպի տուն: Բայց այն տեղը ուր ճամբաները իրար կը խաչաձեւէին, պզտիկ Քլօին հանդիպեցաւ որ հօտ մը կը վարէր:

— Հէ՛, աղաղակեց մեծ Քլօ, ես քեզի չխեղդեցի՞ մի:

— Հապա՛, կէս ժամ առաջ ինծի ծովը նետեցիր:

— Ու աս արջառներու հօ՞տը ուրկէ եկաւ քեզի:

— Ծովին արջառներն են ասոնք: Ամէն բան պիտի պատմեմ քեզի, նախ չնորհակալ ըլլալով զիս խեղդելուդ համար. որովհէ-

տեւ հիմա հարուստ եմ առ յաւէտ, ինչպէս որ կը տեսնես: Պարկին մէջ փակուած կը դողդղայի վախէս. ու հովր կը սուլէր ա-կանջներուս շուրջը երբ ջուրը նետեցիր զիս: Մինչեւ խորքը գացի անմիջապէս. ու տեսայ բողբոջուն երկայնածիլ խոտեր՝ շատ փափուկ: Անմիջապէս տոպրակը բացուեցաւ ու սիրալի օրիորդ մը, ճերմակներ հագած, դալարագեղ պսակ մը գլխին վրայ, ձեռքէս բռնեց ըսելով. «Քեզի՛ կ'սպասէի կոր, պզտիկ Քլօ, նա-յէ՛, ինչ սիրուն պարգեւ մը վերապահած եմ քեզի»: Ու ինծի հօտ մը ցուցուց. Բաղաքավարութեամբ իրեն շնորհակալ եղայ, խնդրելով որ դուրս ելլելու ճամբան ինծի ցոյց տայ, ինչ որ կա-տարեց ամենայն բարեկամութեամբ: Կը տեսնե՞ս, մեծ Քլօ, թէ գետը ծովու ժողովուրդին համար ուրիշ բան չէ բայց եթէ մեծ ճամբայ մը՝ եզերուած գեղեցիկ ծառերով, կանանչագեղ դաշտե-րով ու անուշաբոյր ծաղիկներով: Կ'զգայի ձուկերուն լողանքը գլխուս շուրջը, ինչպէս թռչունները կը թռչին օդին մէջ. Ամէն կողմ՝ ծործորներուն մէջէն պարարտ ու հիանալի արջառներ կ'անցնէին: Իսկոյն իմ հօտովս հասայ ծայրը սանդուխի մը որ զիս հողին վրայ, հոս հանեց:

— Բախտաւոր ես եղեր, ըսաւ մեծ Քլօ, կը կարծե՞ս որ ես ալ արջառներու հօտ մը կրնամ ունենալ, եթէ գետին ալիքնե-րուն մէջ երթամ:

— Անտարակոյս, բայց ես չպիտի կրնամ մինչեւ հոն տանիլ քեզ, ծանր ես դուն. եթէ կ'ուզես մինչեւ հոն քալէ եկուր ու տոպրակին մէջ մտիւր. յօժարակամ ջուրը կը հրեմ քեզ:

— Դուն բարի տղայ մըն ես, պզտիկ Քլօ, բայց յիշէ որ, եթէ . . . եթէ . . . առանց հօտի վերադառնամ ծովէն, խեղդ կ'անիծեմ վերջը՝ գաւազանի հարուածներ տալով:

— Վտանգ մը չկայ, պատասխանեց պզտիկ Քլօ:

Ու ճամբայ ինկան: Երբ կենդանիները, որոնք ծարաւցած էին, նշմարեցին ջուրը, ուժգնօրէն վազեցին խմելու համար:

— Նայէ՛ ինտոր կ'աճապարեն, ըսաւ պզտիկ Քլօ, խորը երթալու ուշանալնուն համար է:

— Երթա՛նք, աճապարէ՛, օգնէ՛ ինծի, օ՛ն, պատասխանեց մեծ Քլօ՝ պարկին մէջ մտնելով, ու աւելի ապահով ըլլալու հա-մար քար մըն ալ վրան աւելցուր, ապա խէ ոչ, կրնայ ըլլալ որ չհասնիմ խորքը:

— Հանգիստ եղիւր, ըսաւ պզտիկ Քլօ, պիտի հասնիս:

— Եւ սակայն ահագին քար մըն ալ վրան աւելցուց, չուա-նով կապեց ու գետը նետեց: Ճլճմ, ահա մեծ Քլօն որ մինչեւ յատակը գնաց:

— Վախճանամ արջառներու տէր օրիորդին չհանդիպի, ըստ ազտիկ Բլո: Ու մեծ ճամբուն վրայ առաջնորդելով իր հօտը, տուն վերադարձաւ գոհ և ուրախ:

ԱՆՏԷՐՈՐԸ

Թրգմ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

3. — Մազերը քափելուն առաջին առնելու համար օժանելիք

Ա. Դեղագիր. — Առէք

Մօէլ տը պէօֆ	300	կրամ
Ասէդադ տը բլօն քրիսթալիկէ	5	»
Պօմ տը Բէրու	25	»
Ալքօօլ	60	»
Թէնթիւր տը քանթարիտ	3	»
Թէնթիւր տը ժիրօֆլէ	3	»

Աղէկ մը իրար խառնեցէք. այս օժանակէն կաղինի չափ առէք, ամէն իրիկուն քսեցէք մազոտ մորթին վրայ, մազերուն թափիլը կ'արգիլուի ասով:

4. Բ. Դեղագիր:

Պէօր տը գագաօ	40	կրամ
Ուիլ տ'օլիվ բիւր	20	»
Գինին	4	»
Թանէն	6	»
Թէնթիւր արօմադիք	8	»

5. — Դարձեալ 50 կրամ ուիլ տ'օլիվ (ընտիր ձէթ) 5 կրամ էսանս տը մասիի հետ խառնելով գործածելը օգտակար կ'ըլլայ մազերը թափելուն առաջը առնելու համար: Նոյն արդիւնքը կ'ունենանք նաեւ երբ օրն երկու անգամ շփումներ կատարենք 200 կրամ էսբրի տը վէն եւ 5 կրամ պօմ տը Բէրուէ բաղադրեալ լուծոյթով մը:

Այս դեղագրերուն պատրաստութիւնը վկայեալ և փորձառու դեղագործներու ձեռքով կատարել տալու է:

Գալով տարիքն առնելու հետեւանքէն պատճառուած հերաթափութեան, ամէն յանձնարարուած դեղ ու դարման անօգուտ ու անկարող են առաջին առնելու համար:

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

ԹԵՐԹ ՄԸ ԹՈՒՂԹ ԱՌԱՆՑ ՍԵՒՑՆԵԼՈՒ ՄԵԼԱՆԻ ՄԷՋ ԹԱԹԽԵԼ

Այս փորձը կատարելու համար լայն բերանով կաղամար մը պէտք է :

Ճերմակ թերթ մը թուղթ գլանի պէս ոլորելով՝ կաղամարին մէջ կը թաթիւէք եւ մեղանով սեփ սեւ եղած դուրս կը հանէք, ցուցնելու համար թէ կաղամարը լեցուն է : Պակսած մեղանին տեղը լեցնելու համար սեղանին վրայի մեղանին շիշը կ'առնէք և պարունակութիւնը կը լեցնէք կաղամարին մէջ :

Հիմա խնդիրը նորէն թերթ մը թուղթ մեղանին մէջ խոթե-



լով առանց սեւ բիծի մը, առաջուան պէս մաքուր դուրս հանելն է : Պատկերին մէջ տեսնուածին պէս՝ թուղթ մը պլորեցէք և առանց վախնալու մեղանին մէջ խոթեցէք. երբ դուրս հանէք՝ ներկաները զարմացմամբ պիտի տեսնեն որ թուղթը մաքուր մնացեր է : Անշուշտ հոս վարպետութիւն մը կայ. ըսեմ թէ ի՞նչ է սոն :

Կաղամարը մեղանով լեցուն է, բայց շիշին մէջը բոլորովին չոր է, հինէն մնացած մեղանի շիշ մըն է որու մէջ առաջուրնէ փոշիի վերածուած ֆօթֆան կը դնէք. մեղան լեցնելու պէս ընելով՝ շիշին պարունակութիւնը կը թօթուէք կաղամարին մէջ, ա՛լ անկէ ետքը ուղած թուղթերնիդ կրնաք մէջը դնել առանց աղտոտելէ վախնալու :

Հանրագիտակի վերջին թիւով աւարտեցաւ Բարոյական եւ Գործնական Դաստիարակութիւնը Աղջկանց Վարժարաններու մէջ գործը գործ Ազն. Տիկ. Փ. Հաղարապետեան նուիրած էր Թերթիւ ընթերցողներուն: Սոյն երկին հրատարակութեան սկսելէն մինչեւ այսօր մասնագէտներու կողմէ յայտնուած գնահատութիւնը ինչպէս նաեւ գրեթէ բոլոր Պոլսոյ ու Գաւառի վարժարանաց տնօրէններու ցցուցած ընդունելութիւնը անոր նկատմամբ, քաջալերութիւն տուին մեզ զատ հատորով մը հրապարակ հանել այս օգտաշատ գիրքը: Արգէն հարկ եղած օրինական դիմումներուն ձեռնարկած ենք, և կը յուսանք թէ քիչ ժամանակի մէջ կարող պիտի ըլլանք հայ օրիորդներու ընծայել գիրք մը խնամեալ տպագրութեամբ և 25է աւելի սիրուն պատկերներով որոնք յատկապէս պիտի փորագրուին: Ազն. Հեղինակին առաջարկին համաձայն սոյն հատորին գինը կարելի եղածին չափ աժան պիտի ըլլայ որպէսզի ամէնէն աղքատիկ ուսանողներն ալ կարենան օգտուիլ անկէ:

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

1. — Ի՞նչպէս կ'ըլլայ որ կարի ասեղ մը ջուրին վրայ կը կենայ առանց որ եւ է յենարանի:

2. — Ամանի մը մէջ ջուր լեցուած է, որուն երեսը հողով ծածկուած է. մատս կը մօտեցնեմ հողին ու ջուրին, և ահա հողը կը փախչի և ամանին եզերքները կը հուլաքուի: Ի՞նչ է պատճառը:

3. — Բարձր շէնք մը ելլելու համար սանդուխ մը դրուած է, որուն երկայնութիւնն է 13 մէթր, իսկ շէնքի ստորոտէն մինչեւ սանդուխի ոտքերուն հեռաւորութիւնն է 5 մէթր: Շէնքի բարձրութիւնը որչա՞փ է:

4. — Պըտուղ մ'եմ ես խիստ անուշ,
Պատեան չունիմ իբրեւ նուշ,
Հիւանդներուն կ'ըլլամ դեղ
Սընունդովս շատ հիւթեղ.
Թէ առջի գիրս վերցընես,
Մարդ անհատ մը կ'ըլլամ ես:

Մ. ՊԱՍԹԱՃԵԱՆ

ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆԹԻԹԻԻԹ Ի ԳՕՆԻԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող Ամերիկեան միւս գոլէճներուն յար և նման ծրագրով՝ մը՝ Հայ., Օսմ., Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ Բնական, Բնագիտական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իբրեւ արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն, յուսանկարչութիւն և ջութակահարութիւն: Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ երեք տարուան

Վանառականական Դասընթաց

մը՝ ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս Առեւտրական Աշխարհ., Թուաբ., Տոմարակալութ., Օրէնսգիտութիւն, Վաճառականական և Սեղանաւորական գործողութիւններ, Պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Հայ., Օսմ. և Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն., եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու: Տարակոյս չկայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան: Գիշերօթիկներու դպրոցական տարեթուական է միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24 ին, Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել առ Տնօրէնն Վեր. Տքդ. Ա. Յ. Հայկազեան. ի Գոնիա:

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏՄԱԿԻ

Օրտու. — Յ. Էֆ. Հ. — Նոր բաժանորդին զրկուեցաւ 1—29 թրերը: Մանիսա. — Մ. Էֆ. Դ. — Ստացանք: Թերթերը 1—29 զրկուեցաւ: Ատաբազար. — Ա. Էֆ. Պ. — Ստացանք, շնորհակալ ենք: Նիկովիդիա. — Յ. Էֆ. Տ. Ա. — Ստացանք շնորհակալ ենք: Բէօթահիւս. — Մ. Էֆ. Շ. — Ստացանք նամակնիդ, շնորհակալութիւն: Ս. Հիսար. — Մ. Էֆ. Պ. — Ստացանք, կը զրկուի: Շնորհակալութիւն: Կիւմիւլիճիէ. Ս. Էֆ. Դ. — Ձեր յանձնարարութիւնը զրկուեցաւ: Նիկովիդիա. — Յ. Էֆ. Ղ. — Հանրագիտակի պակաս թիւերը զրկուեցաւ, կրնաք ստանալ մեր Մեծ. Գործակալէն: Հիւսէյնիկ. — Յ. Էֆ. Տ. Յ. — Ստացանք նամակնիդ: « Ալմէրիայի Հովիտը » մեզի չէ հասած: Հալէպ. Մ. Էֆ. Ա. — Մեր կրկնակի նամակներով խնդրած հրահանգնուս պատասխան ստացած չըլլալուն կ'սպասէինք: — Այս շաբաթուան թղթատարով ձեր յանձնարարութիւններէն մաս մը զրկուեցաւ: — Ձատ նամակ կ'ընդունիր: Մալաթիա. — Մ. Էֆ. Թ. — Ղրկած. թղթաղորդմներն յանձնեցինք « Մանգուլի » ի խմբագրութեան:

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԳԻԶ

ՄԱՐԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԵՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի Գատտէսի, Թիւ 33, Մանգուլի տպարանին կից

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԻԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ Ս. ՏԷՄԻՐԵԱՆ պատիւ ունին ծանուցանել զրաւէր հասարակութեան թէ իմասնաւորի Գաւառի վարժարանաց տեսչութեանց զիւրութիւն մը ըլլալու նպատակաւ նոր ԴՐԱՏՈՒՆ մը հիմնադրեալ են որ պիտի զբաղի հետեւեալ գործառնութիւններով:

Կը հայթայթէ, թէ Մայրաքաղաքիս մէջ և թէ Գաւառներու մէջ, Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն ու Գերմաներէն հրատարակութիւններ՝ Դպրոցական Դասագիրք, Վէպ, Թատրերգութիւն, Գիտական Հեղինակութիւն, Պարբերական ու Հանդէս:

Դպրոցական գրքերու և պիտոյքներու հայթայթման մասին ամենամեծ զեղչը կուտայ (30%) իր հրատարակութիւններուն համար, իսկ միւս գրքերուն ալ համեմատական ամէնէն բարձր զեղչը՝ իւր վճարումներու համար անյուսալի դիւրութիւններ կ'ընծայէ (այս մասին յատկապէս կը բանակցինք):

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏԱՆՍ	ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ	
ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ	Գործնական եւ Արհեստական (Տարրական)	3 Ղրուշ
»	» (Միջին, Ա.)	4 »
»	» (Միջին, Բ.)	5 »
ԲՆԱԳԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ	(Բարձրագոյն)	7 »
ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՅ.	Ալֆապէ Ֆրանսերէն	2 »
»	Երկրորդ Գիրք Ֆրանսերէնի	4 »
ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՅ.	Երրորդ »	6 »
ԾԱՂԿԱՔԱՂ ՄԱՆԿԱՎԱՆ ԴԱՍԵՐՈՒ, Հայ Ընկերցարան	»	3 »
»	ՏԻՊԱՐ ԴԱՍԵՐՈՒ, Միջին Ընկացք	4 »
ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹ ԵԱՆ	»	4 »
ՀԻՆ ՈՒԽՏԻ (Սըրազան Պատմութիւն) ՍԱՀԱԿԵԱՆՅ	»	4 »
ՆՈՐ ՈՒԽՏԻ (»)	»	4 »
ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ ԿԱՄ. Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի	»	12 »
ԱՂԹԱԳԻՐԲ Հայ. Ս. Եկեղեցւոյ (Բ. Տիպ)	»	10 »
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՑՑ	»	6 »
ՏՕՆԱԿԱՐԳ Հայ. Ս. Եկեղեցւոյ	»	12 »
ԳԱՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ	»	8 »
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՅ	»	10 »

Սոյն ցանկը որ կը պարունակէ Իրադիտութեան, Հայ Ընկերցանութեան, Ֆրանսերէնի, Կրօնագիտութեան ամբողջական դասընթացքներ, հետզհետէ պիտի ճոխանայ ուրիշ դասընթացներով, ամէնակարճ ժամանակի մէջ:

Գրատունս կը հայթայթէ նաեւ Մանկապարտէզի և Ֆրէսկայի նուէրներ և առարկաներ, ինչպէս նաեւ ամէն տեսակ պիտոյք՝ թուղթ, տետրակ, մատիտ, աշխարհացոյց կամ համայնապատկեր քարդեր, եւայլն:

Գրատանս Տնօրէնութիւնը իր բազմամեայ ու սուղջական փորձառութիւնով և բազմաթիւ ծանօթ ուսուցիչներու հետ ունեցած յարաբերութիւնով կը փափաքի օգտակար ըլլալ թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու Պատ. Թաղ. Սորհրդոց, Հոգաբարձութեանց և վարժարաններու տեսչութեանց, դպրոցական ամէն տեսակ պէտքերու հայթայթումէ զատ, զիւրութիւն ընծայելով նաեւ ուսուցիչ և վարժուհի հայթայթելու և փափաքուած պաշտօնին համեմատ պաշտօնեայ զրկելու մասին:

Հասցէ՝

Տպագրիչ Նշան Կ. Պերպերեան

Կ. ՊՈԼԻՍ, Պոպ Ալի ճառոտէսի, Թիւ 38